ճակ կազմելով Աղուանից աշխարհքում՝ պատկանում էին Մէյ-սարի սուրբ Աստուածածնի վանքին. և ինչպէս երևում է կեր-պարանքներից (տիպ) բարբառներից և հնչմունքներից զոնէ Խաչմասցիք, Քիլվարցիք և Մադրասեցիք իսկապէս Աղուանից ազգի մնացորդք են։

Դարբանդի 15 գաղ բարձրութեամբ և 6 գաղ լայնութեամբ հաստ ու ալինդ շինած բերդի համար զանազան խօսքեր, կար-ծիքներ, և գրուածքներ կան, թէ Աղէքսանդր Մակեդոնացին է շինել, կամ պարսից Նուշրեւան թագաւորը և կամ Աղուանից Վաչագան թագաւորը և կամ հայոց Արտաշէս մեծ թագաւորը, որ Ալանաց հետ կռիւ ունէր և Ալանաց Սաթ թագաւորի աղ-ջիկ Սաթենիկին առնելով՝ հաշտուեց, բայց Եղիշէ ժամանակա-կից պատմիչն պարսից Յազկերտի համար է գրում, թէ «Շին-եաց մօտ ի դուռն Ալանաց զպահակ Հոնաց բազում աշխատա-նօք և բազում ծախիւք զբերդ մի մեծ և հզօր, և առ սովաւ կանգնեաց զբազում աւանս ի բնակութիւն մարդկան»։ Պահակ բառը ցոյց է տալի թշնամու դէմը փակող բերդ, ամրութիւն և պահականոց (աշտարակ, բուրգ, թաբիա), բայց թէ յառաջ եւս կայր այս բերդը քան զՅազկերտ յայտնի չէ, և Յազկերտ այս բերդից սկսած այն երկայն պարիսպն է շինել, որ գնում է սա-բերի վրայով և ձորերի միջով 2,3 օրւայ ճանապարհ, և հաս-նում է մինչև Զակաթալայ քաղաքը, որ Կովկասի հարաւային ստորոտումն դաշտի վրայ է։ Եւ ինչպէս աւանդները պատմում են, պարսպի ամեն 100 քայլաչափ տեղումն մի մի բուրգ է շի-նած՝ կարծես պահապան բնակելու համար, և այս է պահակը, որ պարսիկները դարբանդ են ասել, այն է կապանք, կիրճ, նե-զուց, ամուր տեղ, են, ինչպէս և նախնիք ասել են դուռն եր-կաթի։ Այս եւս իմանալու է, որ Աղէքսանդր Մակեդոնացին ժա-մանակ չունեցաւ բերդեր շինելու, այլ եկաւ և անցաւ գնաց, բայց թէ հպարտութիւն չլինի ասելս, մեր — Արտաշէսը շինեց այս ամուր բերդն ու պարիսպը, կամ մեր մեծն Խոսրով հայրն Տրդատայ, որք Ալանաց և միւս հիւսիսականաց հետ պատե-բազմ են ունեցել, և փառաւոր յաղթանակ տարել, չեմ սխալ-ւիլ։ Վերջապէս գուցէ Աղէքսանդր Մակեդոնացին պատահած